ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 444-Ա/2 **«31» մարտի, 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կազմակերպել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» միջոցառումն իրականացնելու համար կազմակերպության ընտրության մրցույթ:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 1-ի:

3. Հաստատել մրցույթին մասնակցության հայտի ձևը՝ համաձայն Հավելված N 2-ի:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«31» մարտի, 2023 թ.
N 444-Ա/2 հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն հայտարարում է Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» միջոցառումն իրականացնելու համար կազմակերպության ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**: Մրցույթի արդյունքում նախատեսվում է ընտրել կազմակերպություն, որը մրցութային հիմունքներով երիտասարդ շահառուներին կարող է տրամադրել ֆինանսական աջակցություն հետևյալ ուղղություններով.

– գիտական միջոցառումների կազմակերպում,

– գիտական դրամաշնորհների տրամադրում,

– գիտական միջազգային հրապարկումների որակական և քանակական աճին նպաստող ծրագրերի կազմակերպում,

– օտարերկրյա պետությունների անվանի գիտնականների դասախոսությունների կազմակերպում,

– գիտության ոլորտում երիտասարդների ներգրավման կամ առաջընթացին միտված այլ ծրագրեր:

Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2023 թվականի ապրիլի 21-ը:

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«31» մարտի, 2023 թ.
N 444-Ա/2 հրամանի

ՀԱՅՏ

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Կազմակերպության

- լրիվ անվանում, կազմակերպաիրավական ձև _____
- լիազոր մարմին, գերատեսչական պատկանելություն _____
- ղեկավարի ազգանուն, անուն, հայրանուն _____
- ղեկավարի գիտական աստիճան, գիտական կոչում _____
- պետական ռեգիստրում գրանցման համար, ամսաթիվ _____
- հարկ վճարողի հաշվառման համար _____
- իրավաբանական հասցե _____
- փոստային հասցե _____
- էլեկտրոնային փոստի հասցե _____
- հեռախոս _____
- ինտերնետային կայքէջ _____
- ղեկավարի ստորագրություն _____

Կ. Տ.

«____» _____ 2023 թ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

* *մինչև 2 էջ*